## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
## ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-Ի ԿՈՆԴԱԿԸ
### Պ. ՌՈՄԱՆ ԵՍԱՅԱՆԻՆ

*Գերամեծար ՌՈՄԱՆ ԲՈՂԴԱՆԻ ԵՍԱՅԵԱՆ հարազատ որդոյ Մայր Աթոռոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի Ողջոյն Հայրական եւ օրհնութիւն Հայրապետական:*

*Գոհութեամբ սրտի իրազեկ եղանք Առաջնորդէն Հայոց Իրանա-Հնդկաստանի ի Գերապատիւ Տ. Վահան Եպիսկոպոսէ, եթէ Դուք ի վաղուց հետէ հանապազ ցուցեալ էք զմարդասէր ոգի Փրկչին մերոյ, քաջ գիտելով զքարոյական պարտիս Ձեր առ Ազգն մեր եւ առ Հայաստանեայց Ս. Եկեղեցի առատաձեռնութեամբ մասն եւ բաժին հանեալ էք հալալ վաստակոց Ձերոց հօգուտ եւ ի շինութիւն կրթական, բարեգործական եւ ազգային-եկեղեցական հաստատութեանց մերոց: Եւ զարդիս ոչ միայն ականջալուր եմք բարեաց գործոց Ձերոց, այլ ականատես վկայ առատաձեռն նուիրացն, զորս մատուցեք Ս. Էջմիածնի եւ Գահակալի նորին ի հիշատակ անձին Ձերոյ եւ ծնողաց Ձերոց:*

*Արդ ի նկատի առեալ Մեր զառաքինի ընթացս եւ զբարի գործս Ձեր այսու Հայրապետական Կոնդակաւս, ի նշան Հայրական սիրոյ եւ գոհունակութեան, շնորհեմք Ձեզ զականակուռ ոսկեայ Շքանշան առաջին աստիճանի հանուն Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, որ լիցի Ձեզ մշտահուշ հիշատակ ի Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի եւ Մենջ:*

*Օրհնեմք զՁեզ եւ մաղթեմք ի Տեառնէ պարգեւել Ձեզ եւ ընտանեաց Ձերոց կեանս բարեբաստիկս եւ երջանիկս ընդ համոյր ամս:*

*Ողջ լերուք զօրացեալ ի Տէր եւ հաւետ օրհնեալ ի Մենջ:*

ԳԵՎՈՐԳ Զ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ